ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2016թ. օգոստոսի 11- ին, N 100 -Ա

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Քաղաքացիական ծառայության մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016 թվականի օգոստոսի 9-ի N 651-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 61-2.3-51) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետի (ծածկագիր՝ 61-2.2-21) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

Բաժնի պետը վարչության պետի, Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 61-4.1-31) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:>>:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ